ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

# ՈՐՈՇՈՒՄ

## «15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 1

## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ կետով, Կարբի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Կարբի համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 1 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Կարբի համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի դրույքաչափերը հաստատելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

2. Կարբի համայնքում 2018 թվականի համար տեղական վճարների դրույքաչափերը հաստատելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

3. Կարբի համայնքի 2018 թվականի տեղական բյուջեն հաստատելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

4. Կարբի համայնքի ղեկավարի 2018 թվականի ամսական աշխատավարձի դրույքաչափը հաստատելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

5. Կարբիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, «Երեքնուկ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության, «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

6. <Կարբիի բժշկական ամբուլատորիա> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու մասին հարցը:

/Զեկ.՝ Կ. Բաղդասարյան/

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Սեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Ջոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

# ՈՐՈՇՈՒՄ

«15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 2

## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18)-րդ մասով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով, Կարբի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում է ստորագրման պահից:

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Սեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Ջոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի
համայնքի ավագանու
2018 թ. հունվարի [illegible]-ի N [illegible] որոշման

**ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

,տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ մասի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներին համապատասխան՝ Կարբի համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Կարբի համայնքում տեղական տուրքերի 2018 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ Սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Կարբի համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը Սահմանվում է՝

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000(տասնհինգ հազար) դրամ.

բ) սույն կետի 1-ին ենթակետի <<ա>> պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000(երեսուն հազար) դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000(հիսուն հազար) դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000(հիսուն հազար) դրամ.
- 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000(հարյուր հազար) դրամ.

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000(երեք հազար) դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000(հինգ հազար) դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է՝ 3000 դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն որոշման իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

4) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N1 հավելվածի:

5) Համայնքի վարչական տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տեղական տուրքը սահմանվում է՝ համաձայն N 2 հավելվածի ,

6) Կարբի համայնքի վարչական տարածքում՝

ա. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Կարբի համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 (երեք հարյուր հիսուն) դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ. հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ.

գ. խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 30000 (երեսուն հազար)դրամ.

դ. համայնքային կանոններին համապատասխան հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն N 3 հավելվածի:

7) Կարբի համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝ 50000 (հիսուն հազար)դրամ:

8) Կարբի համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 (քսանհինգ հազար)դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 (հիսուն հազար)դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 (երկու հարյուր հազար)դրամ.

դ. խաղատների համար՝ 500000 (հինգ հարյուր հազար)դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար)դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ 100000 (մեկ հարյուր հազար)դրամ.

9) Կարբի համայնքի վարչական տրածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000(մեկ հազար) դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1750(մեկ հազար յոթ հարյուր հիսուն ) դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 750(յոթ հարյուր հիսուն) դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 (զերո)դրամ:։

10) Կարբի համայնքի անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000(հիսուն հազար) դրամ:

11) Կարբի համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5 000(հինգ հազար) դրամ:

12) Կարբի համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

Հավելված N1

Կարբի համայնքի ավագանու
2018 թվականի ----------ի N ------
- որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

## Կարբի համայնքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար

Կարբի համայնքում ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

| Տարածքի մակերես | մինչև 26 քմ. | 26-50 քմ. | 50-100 քմ. | 100-200 քմ | 200-500 քմ. | 500 և ավելի քմ. |
|---|---|---|---|---|---|---|
| Տեղական տուրքի գումարը | 5000 | 6500 | 10000 | 18750 | 22500 | 50000 |

Հավելված N2

Կարբի համայնքի ավագանու
2018 թվականի ----------ի N ------
- որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

## Կարբի համայնքում ծխախոտի արտադրանքի արտադրանքի վաճառքի թույլտվության համար

Կարբի համայնքում ծխախոտի արտադրանքի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

| Տարածքի մակերես | մինչև 26 քմ. | 26-50 քմ. | 50-100 քմ. | 100-200 քմ | 200-500 քմ. | 500 և ավելի քմ. |
|---|---|---|---|---|---|---|
| Տեղական տուրքի գումարը | 5000 | 6500 | 10000 | 18750 | 22500 | 50000 |

Հավելված
Կարբի համայնքի ավագանու
2018 թվականի ---------- ի
որոշման

# ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

## Կարբի համայնքում հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար

Կարբի համայնքում հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

| Տարածքի մակերես | մինչև 26 քմ. | 26-50 քմ. | 50-100 քմ. | 100-200 քմ | 200-500 քմ. | 500 և ավելի քմ. |
|---|---|---|---|---|---|---|
| Տեղական տուրքի գումարը | 2500 | 5000 | 10000 | 15000 | 20000 | 30000 |

Կարբի համայնքում համայնքում ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

| Տարածքի մակերես | մինչև 26 քմ. | 26-50 քմ. | 50-100 քմ. | 100-200 քմ | 200-500 քմ. | 500 և ավելի քմ. |
|---|---|---|---|---|---|---|
| Տեղական տուրքի գումարը | 500 | 1000 | 2000 | 4000 | 7500 | 12500 |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

## ՈՐՈՇՈՒՄ
««15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 3

## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 18)-րդ մասով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 2-րդ մասով, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 7-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել Կարբի համայնքում տեղական վճարների 2018 թվականի դրույքաչափերը՝ կից հավելվածով:

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Մեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Զոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

05001747

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզի

Կարբի համայնքի ավագանու

2018 թ. ... 15-ի

...

ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարբի Համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Կարբի համայնքում տեղական վճարների 2018 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Կարբի համայնքի վարչական տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

գ. 300-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 /Երեսուն հազար/ դրամ.

դ. 1500 -ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /Մեկ հարյուր հազար/ դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

գ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

դ. 1500 -ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 600000 /Վաթսուն հազար/ դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝

ա. մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար 10000 /տաս հազար/ դրամ.

բ. 100-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

գ. 500-ից մինչև 1500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 /երեսուն հազար/ դրամ.

դ. 1500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 600000 /Վաթսուն հազար/ դրամ:

4) Կարբի համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

5) Կարբի համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝

1. Նենցաղային աղբի համար, բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 /մեկ հարյուր/ դրամ,
2. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա.ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 2000 /երկու հազար / դրամ.

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 6000/Վեց հազար/ դրամ:

Սույն հավելվածի 1-ին կետի 5-րդ մասով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածը որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում՝ տեխնիկական, աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով՝

| Հ/հ | Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբ արտադրող օբյեկտների անվանումները | Չափման միավորը | Ամսական վճարի չափը ( դրամ ) |
|---|---|---|---|
| I. Առևտրի օբյեկտներ | | | |
| 1. | Մթերային խանութներ, հանրախանութներ | 1քմ | 70 ( յոթանասուն ) |
| 2. | Տաղավարներ, կրպակներ | 1քմ | 200 ( երկու հարյուր ) |
| 3. | Վաճառասեղան (օրենքով սահմանված դեպքերում) | 1քմ | 250 ( երկու հարյուր հիսուն ) |
| 4. | Վրան - կրպակ (օրենքով սահմանված դեպքերում) | 1քմ | 375 ( երեք հարյուր յոթանասունհինգ ) |
| 5. | Շինանյութի, տնտեսական ապրանքների, հագուստի խանութներ, սուպերմարկետներ | 1քմ | 40 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ( քառասուն ) |
| 6. | Գյուղմթերքի շուկաներ, բանջարեղենի խանութներ | 1քմ | 90<br>( իննսուն ) |
| 7. | Ծաղկի խանութներ | 1քմ | 100<br>( հարյուր) |
| 8. | Արդյունաբերական տոնավաճառներ | 1քմ | 25<br>( քսանհինգ ) |
| | II. Գրասենյակներ | | |
| 1. | Գիտահետազոտական,ինժեներական,ուսումնական ինստիտուտներ | 1 աշխատակից | 100<br>( հարյուր ) |
| 2. | Բանկեր, վարկային կազմակերպություններ և այլ վարչական գրասենյակներ | 1քմ | 50<br>( հիսուն ) |
| 3. | Փոստային բաժանմունքներ | | 30<br>(երեսուն) |
| | III. Բժշկական հաստատություններ | | |
| 1. | Դեղատներ | 1քմ | 50<br>( հիսուն ) |
| 2. | Հիվանդանոցներ,կլինիկաներ | 1քմ | 10<br>( տասը ) |
| | IV. Ավտոտրանսպորտի սպասարկման օբյեկտներ | | |
| 1. | Ավտոարհեստանոցներ | 1քմ | 40<br>( քառասուն ) |
| 2. | Բենզալցակայաններ, գազալցակայաններ | 1քմ | 100<br>( հարյուր) |
| 3. | Ավտոլվացման կետեր | 1քմ | 20<br>( քսան ) |
| 4. | Ավտոկայանատեղիներ | 1քմ | 5<br>( հինգ ) |
| 5. | Ավտոսպասարկման կայաններ | 1քմ | 10<br>( տասը ) |
| 6. | ավտոբուսային կայաններ | 1քմ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ( սեկ ) |
| **V. Ուսումնական հաստատություններ** | | | |
| 1. | Դպրոցներ, մանկապարտեզներ, ուսումնարաններ, համալսարաններ, քոլեջներ և այլ ուսումնական հաստատություններ | 1 սան | 10 ( տասը ) |
| 2. | Հատուկ օժանդակ դպրոցներ | 1 սան | 15 ( տասնհինգ ) |
| **VI. Կենցաղային սպասարկման ձեռնարկություններ** | | | |
| 1. | Կենցաղային և համակարգչային տեխնիկայի վերանորոգման սրահներ | 1քմ | 50 ( հիսուն ) |
| 2. | Կարի արհեստանոցներ | 1քմ | 50 ( հիսուն ) |
| 3. | Քիմիական մաքրման սրահներ և լվացքատներ | 1քմ | 50 ( հիսուն ) |
| 4. | Վարսահարդարման և գեղեցկության սրահներ | 1քմ | 40 ( քառասուն ) |
| 5. | Հյուրանոցներ, հասարակական սննդի օբյեկտներ (ռեստորաններ, բարեր և այլն) | 1քմ | 10 ( տասը ) |
| 6. | Սրճարաններ, գիշերային ակումբներ | 1քմ | 50 ( հիսուն ) |
| 7. | Արագ սննդի կետեր | 1քմ | 100 ( հարյուր ) |
| 8. | Կոշիկի նորոգման արհեստանոցներ | 1քմ | 50 ( հիսուն ) |
| **VII. Մշակութային և սպորտային հաստատություններ** | | | |
| 1. | Ակումբներ, կինոթատրոններ, համերգասրահներ, թատրոններ, գրադարաններ | 1 տեղին | 14 ( տասնչորս ) |
| 2. | Մարզադաշտեր | 1 տեղին | 2 ( երկու ) |
| **VIII. Արտադրական ձեռնարկություններ և սառնարանային տնտեսություններ** | | | |
| 1. | Գործարաններ | 1քմ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | | | ( մեկ ) |
| 2. | Խմորեղենի արտադրամասեր | 1քմ | 70<br>( յոթանասուն ) |
| 3. | Հացաթխման արտադրամասեր | 1քմ | 10<br>( տասը ) |
| 4 | Սառնարանային տնտեսություններ | 1քմ | 20( քսան ) |

6) Կարբի համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ:

7) Կարբի համայնքի ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝մեկ երեխայի հաշվարկով ամսական 6000 /վաց հազար / դրամ:

Կողմ 7 բացակա 0 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ բացակա

2. ԱՄԻՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ

3. ԱՍԼԱՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ բացակա

4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԱՆՆԱ կոմղ

5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ կողմ

6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՀԱՏ կողմ

7. ՄԱՅԻԼՅԱՆ ՋՈՀՐԱԲ կողմ

8. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ կողմ

9. ՆԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_ karbi@mail.ru
Հեռ. +37423290590

## ՈՐՈՇՈՒՄ
## «15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 4
## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5)-րդ մասով, 83-րդ հոդվածով, Կարբի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Կարբի համայնքի 2018 թվականի բյուջեն՝ համաձայն կից հավելվածով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | Կողմ 7 | բացակա 2 | դեմ 0 ձեռնպահ 0 |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Մեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիսյան | Ջոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Կարբի համայնքի ավագանու
2018թ. հունվարի __ -ի
№ __ որոշման

**ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի համայնքի 2018թ-ի Բյուջեն հաստատելու մասին**

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ,83-րդ հոդվածով և «բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով , Կարբի համայքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց.

1.Հաստատել Կարբի համայնքի 2018թ.-ի բյուջեն:

| | Գումարը<br>(հազար դրամներով) |
|---|---|
| 1. Եկամուտների գծով | 125,102.60 |
| 2. Ծախսերի գծով | 125,102.60 |

2. Հաստատել Կարբի համայնքի 2018 թվականի բյուջեի եկամուտները, ըստ ձևավորման աղբյուրների դասակարգման առանձին խմբերի, հետևյալ չափերով.

| **Համայնքի բյուջեի եկամուտները** | Գումարը<br>(հազար դրամներով) |
|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | 125,102.6 |
| այդ թվում՝ | |
| **Հարկային եկամուտներ և տեղական տուրքեր** | **29,090.0** |
| այդ թվում՝ | |
| Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | 4,670.0 |
| Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 11,430.0 |
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 12,000.0 |
| Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարություն (տեղադրման) | 110.0 |

| | |
|---|---|
| թույլտվության համար | |
| Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | 10.0 |
| Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտա դրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար | 360.0 |
| Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար | 510.0 |
| **Պաշտոնական դրամաշնորհներ** | **54,433.6** |
| **Այլ եկամուտներ** | **18900** |
| այդ թվում՝ | |
| Գույքի վարձակալությունից եկամուտներ | 400.0 |
| Վարչական գանձումներ | 18500 |
| **Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր** | **10583.4** |
| **Տարեսկզբի ազատ մնացորդ** | 12,095.6 |

3.Հաստատել Կարբի համայնքի 2018 թվականի բյուջեից հատկացումները, ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման, հետևյալ չափերով.

| Բաժին | Խումբ | Դաս | | Գումարը (հազար դրամներով) |
|---|---|---|---|---|
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | 125,102.60 |
| | | | այդ թվում՝ | |
| 1 | | | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | 44,919.20 |
| | | | այդ թվում՝ | |
| | 1 | | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 43,419.20 |
| | | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 43,419.20 |
| | 3 | | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 200.00 |
| | | 3 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 200.00 |
| | 6 | | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) | 1,300.00 |
| | | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերի չպատկանող) | 1,300.00 |
| 4 | | | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | 3,600.00 |
| | | | այդ թվում՝ | |
| | 3 | | Վառելիք և էներգետիկա | 1,060.00 |
| | | 2 | Նավթամթերք և բնական գազ | 1,060.00 |
| | 5 | | Տրանսպորտ | 19,540.00 |
| | | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 19,540.00 |
| | 9 | | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող) | -17,000.00 |
| | | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերի չպատկանող) | -17,000.00 |
| 5 | | | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | 8,000.00 |
| | | | այդ թվում՝ | |
| | 1 | | Աղբահանում | 8,000.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 1 | Աղբահանում | 8,000.00 |
| 6 | | | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **20,500.00** |
| | | | այդ թվում՝ | |
| | 3 | | Ջրամատակարարում | 10,700.00 |
| | | 1 | Ջրամատակարարում | 10,700.00 |
| | 4 | | Փողոցների լուսավորում | 9,800.00 |
| | | 1 | Փողոցների լուսավորում | 9,800.00 |
| 8 | | | **ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ** | **2,000.00** |
| | | | այդ թվում՝ | |
| | 1 | | Հանգստի և սպորտի ծառայություններ | 2,000.00 |
| | | 1 | Հանգստի և սպորտի ծառայություններ | 2,000.00 |
| 9 | | | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **32,000.00** |
| | | | այդ թվում՝ | |
| | 1 | | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն | 31,500.00 |
| | | 1 | Նախադպրոցական կրթություն | 31,500.00 |
| | 6 | | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 500.00 |
| | | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 500.00 |
| 10 | | | **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **3,500.00** |
| | | | այդ թվում՝ | |
| | 3 | | Հարազատին կորցրած անձինք | 1,500.00 |
| | | 1 | Հարազատին կորցրած անձինք | 1,500.00 |
| | 7 | | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող) | 2,000.00 |
| | | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերի չպատկանող) | 2,000.00 |
| 11 | | | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | **10,583.40** |
| | | | այդ թվում՝ | |
| | 1 | | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 10,583.40 |
| | | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 10,583.40 |

4.Հաստատել սույն որոշման 3-րդ կետով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման, հետևյալ չափերով.

| Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Գումարը (հազար դրամներով) |
|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **125,102.60** |
| այդ թվում՝ | |
| **ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ** | **103,102.60** |
| այդ թվում՝ | |
| **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ** | **29,969.20** |
| այդ թվում՝ | |
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 29,969.20 |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ** | **58,150.00** |
| այդ թվում՝ | |
| Շարունակական ծախսեր | 3,900.00 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 200.00 |
| Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում | 48,500.00 |
| Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում | 500.00 |
| Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր) | 2,200.00 |
| Նյութեր | 2,850.00 |
| **Սոցիալական օգնության նպաստներ** | **3,500.00** |
| այդ թվում՝ | |
| - Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 1,500.00 |
| - Այլ նպաստներ բյուջեից | 2,000.00 |
| ԱՅԼ ԾԱԽՍԵՐ | 11,483.40 |
| այդ թվում՝ | |
| Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր, որոնք կառավարման տարբեր | 700.00 |

| | |
|---|---|
| մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ | |
| Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ | 200.00 |
| Պահուստային միջոցներ | 10,583.40 |
| **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **22,000.00** |
| այդ թվում՝ | |
| **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | **39,000.00** |
| այդ թվում՝ | |
| **ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | 39,000.00 |
| այդ թվում՝ | |
| **ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **35,060.00** |
| այդ թվում՝ | |
| - Շենքերի և շինությունների շինարարություն | 12,460.00 |
| - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 22,600.00 |
| **ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ** | **2,670.00** |
| այդ թվում՝ | |
| - Տրանսպորտային սարքավորումներ | 900.00 |
| - Վարչական սարքավորումներ | 900.00 |
| - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 870.00 |
| **ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | **300.00** |
| այդ թվում՝ | |
| - Ոչ նյութական հիմնական միջոցներ | 300.00 |
| **ՊԱՇԱՐՆԵՐ** | **970.00** |
| այդ թվում՝ | |
| -Նյութեր և պարագաներ | 970.00 |
| **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ** | **-17,000.00** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

## ՈՐՈՇՈՒՄ

## «15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 5

## ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11)-րդ մասով, Կարբի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. **Կարբի համայնքի ղեկավարի 2018 թվականի աշխատավարձի ամսական դրույքաչափը սահմանել 300.000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Մեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Զոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

# ՈՐՈՇՈՒՄ

## «15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 6

## ԿԱՐԲԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, «ԵՐԵՔՆՈՒԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, «ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, «ԿԱՐԲԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28)-րդ մասով, Կարբի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2018 թվականի համար Կարբիի համայնքապետարանի աշխատակազմի, «Երեքնուկ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության, «Կարբի համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, «Կարբիի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ըստ հավելված 1, 2, 3 և 4-ով:

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Մեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Ջոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Տ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Արագածոտնի մարզի Կարբի
գյուղական համայնքի ավագանու
2018թ-ի հունվարի __-ի N __ որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԲԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը` 19
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | Հավելավճար դրույքաչափին | Ընդամենը ԱՎՈՒՄ յուրաքանչյուր հաստիքին | Ընդամենը ամսական աշխատավարձը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 300.000 | - | 300.000 | 300.000 |
| Տեղակալ | 1 | 180.000 | - | 180.000 | 180.000 |
| Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Ընդամենը | 3 | | | | 625000 |
| Համայնքային ծառայության պաշտոններ | | | | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 200.000 | - | 200.000 | 200.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-4 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-5 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Առաջատար մասնագետ 3.1-7 | 1 | 145.000 | - | 145.000 | 145.000 |
| Ընդամենը | 7 | | | | 1070000 |

## ՍՊԱՍԱՐԿՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հավաքարար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Պահակ | 4 | 71429 | 20.000 | 91429 | 365716 |
| Ընդամենը | 5 | | | | 437145 |

## Մշակույթի տուն և գրադարան

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մշակույթի տան ղեկավար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Գեղմասվար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Գրադարանի վարիչ | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Գրադարանավար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Ընդամենը | 4 | | - | | 285716 |
| Ընդամենը | 19 | | | | 2417861 |

1974թ-ից հետո ծնված աշխատակիցների աշխատավարձը ,եթե ստանում են նվազագույն աշխատավարձ 71429(Յոթանասունմեկ հազար չորս հարյուր քսանինը)ՀՀ դրամի փոխարեն կարդալ 76389(Յոթանասունվեց հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ

Կողմ 7 բացակա 2 Դեմ 0 Ձեռնպահ 0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ բացակա
2. ԱՄԻՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ
3. ԱՍԼԱՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ բացակա
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԱՆՆԱ կոմղ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ կողմ
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՉԱՏ կողմ
7. ՄԱՅԻԼՅԱՆ ՋՈՀՐԱԲ կողմ
8. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ կողմ
9. ՆԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Տ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հաստատված է
ՀՀ Արագածոտնի մարզի
Կարբի համայնք
«__» հունվար 2018 թ.
որոշում

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԵՔՆՈՒԿ» ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| h/h | Հաստիքների անվանումը | Հաստիքների քանակը | Հաստիքների ամսական պաշտոնային դրույքաչափերը /դրամ/ | Հավելավճար դրույքաչափին | Ընդամենը ԵԿՈՒՄ յուրաքանչյուր հաստիքին | Ընդամենը ամսական աշխատավարձը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | | 5 |
| 1 | Տնօրեն | 1 | 135000 | - | 135000 | 135000 |
| 2 | Մեթոդիստ, ուս. գծով տնօրենի տեղակալ | 1 | 107500 | - | 107500 | 107500 |
| 3 | Երաժշտության դաստիարակ | 0.5 | 107500 | - | 107500 | 53750 |
| 4 | Կերպարվեստի դաստիարակ | 0.5 | 107500 | | 107500 | 53750 |
| 5 | Դաստիարակ | 4 | 107500 | - | 107500 | 430000 |
| 6 | Դաստիարակի օգնական | 4 | 71429 | - | 71429 | 285716 |
| 7 | Գլխավոր հաշվապահ | 1 | 115000 | - | 115000 | 115000 |
| 8 | Բուժքույր | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 9 | Տնտեսվար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 10 | Խոհարար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 11 | Օժանդակ բանվոր | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 12 | Լվացքարար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 13 | Խոհարարի օգնական | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 14 | Պահակ | 3 | 71429 | 10.000 | 81429 | 244287 |
| 15 | Հավաքարար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| 16 | զանձապահ | 1 | 80000 | - | 80000 | 80000 |
| 17 | գործավար | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| | Ընդամենը | 24.5 | | | | 2076435 |

ԿՈՂՄ-7 ԲԱՑԱԿԱ 2 ԴԵՄ-0 ՁԵՌՆՊԱՀ-0

1974թ-ից հետո ծնված աշխատակիցների աշխատավարձը ,եթե ստանում են նվազագույն աշխատավարձ 71429(Յոթանասունմեկ հազար չորս հարյուր քսանինը)ՀՀ դրամի փոխարեն կարդալ 76389(Յոթանասունվեց հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ բացակա
2. ԱՄԻՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ
3. ԱՍԼԱՆՅԱՆ ՄԵՐՅԱՆ բացակա
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԱՆԱ կոմղ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ կողմ
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՀԱՏ կողմ
7. ՄԱՅԻԼՅԱՆ ՋՈՀՐԱԲ կողմ
8. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ կողմ
9. ՆԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Արագածոտնի մարզի
Կարբի համայնքի ավագանու
2018թ.-ի հունվարի 15-ի N 2 որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

## «ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ | Հավելավճար դրույքաչափին | Ընդամենը ԱՎՈՒՄ յուրաքանչյուր հաստիքին | Ընդամենը ամսական աշխատավարձը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 200000 | - | 200000 | 200000 |
| Հաշվապահ | 1 | 100000 | - | 100000 | 100000 |
| Հարկահավաք | 2 | 105000 | - | 105000 | 210000 |
| Վարորդ | 2 | 185000 | - | 185000 | 370000 |
| Խմելու ջրի կապտաժ. պատասխանատու | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Բանվոր | 2 | 130000 | - | 130000 | 260000 |
| Խմելու ջրի ջրամբարի պատասխանատու | 1 | 71429 | - | 71429 | 71429 |
| Ջրամատակարարման պատասխանատու | 1 | 100000 | - | 100000 | 100000 |
| հավաքարար | 2 | 71429 | - | 71429 | 142858 |
| **Ընդամենը** | 13 | | | | 1525716 |

1974թ-ից հետո ծնված աշխատակիցների աշխատավարձը ,եթե ստանում են նվազագույն աշխատավարձ 71429(Յոթանասունմեկ հազար չորս հարյուր քսանինը)ՀՀ դրամի փոխարեն կարդալ 76389(Յոթանասունվեց հազար երեք հարյուր ութսունինը) ՀՀ դրամ

Կողմ 7 բացակա 0 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ բացակա
2. ԱՄԻՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ կողմ
3. ԱՍԼԱՆՅԱՆ ՍԵՐՅԱՆ բացակա
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԼԻԱՆՆԱ կողմ
5. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ կողմ
6. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՀԱՏ կողմ
7. ՄԱՅԻԼՅԱՆ ՋՈՀՐԱԲ կողմ
8. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ կողմ
9. ՆԱՆՅԱՆ ԹԱԹՈՒԼ կողմ

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 4

ՀՀ Արագածոտնի մարզի

Կարբի համայնքի ղեկավարի

2018թ.-ի ________ ի N____ որոշման

| հ/հ | Կառուցվածքային ստորաբաժանումներ և հաստիքների անվանումը | Հաստիքային 1 միավոր | Միավոր աշխատավարձի չափը |
|---|---|---|---|
| 1.ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ | | | |
| 1 | Տնօրեն | 1.0 | 180000 |
| 2 | Գլխավոր հաշվապահ՝ Սաթիկ Ավետիսյան | 1.0 | 160000 |
| 3 | Համակարգի օպերատոր՝ Ամիրյան Ռուզաննա | 0.5 | 60000 |
| 4 | Վարորդ/տնտեսվար՝ Արծվի Վարդանյան | 0.5/0.5 | 100000 |
| | Ընդամենը | 3.5 | |
| 2.ԲԺՇԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 1 | Ընտանեկան բժիշկ<br>Արամյան Արգինե<br>Ղազարյան Արմինե<br>Դավթյան Հռիփսիմե | 2.5<br>1.0<br>1.0<br>0.5 | <br>331000<br>331000<br>146000 |
| 2 | Բժիշկ-թերապևտ | 0.5 | 91481 |
| 3.ՄԻՋԻՆ ԲՈՒԺ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ընտանեկան բուժքույր.<br>Կարբիի տեղամասի բուժքույրեր՝ | 7.25 | |
| | Հակոբյան Հեղուշ | 0.5 | 73000 |
| | Ասլանյան Լիդա | 1.0 | 121998 |
| | Շահբազյան Անուշ | 0.25 | 30000 |
| | Ամիրյան Ռուզաննա | 0.5 | 48596 |
| | Խուդավերդյան Համեստ | 0.25 | 32893 |
| | Օհանավանի ԲՄԿ-ի բուժքույր՝<br>Վահանուշ Խաչատրյան | 1.0 | 73000 |
| | Արտաշավանի ԲՄԿ-ի բուժակ՝<br>Ռուստամյան Ժիրայր | 1.0 | 73000 |
| | Սաղմոսավանի ԲՄԿ-ի բուժքույր՝<br>Բագրատյան Նինել | 1.0 | 73000 |
| | Լաբորանտ՝<br>Անուշ Շահբազյան | 1.0 | 160000 |
| | Դպրոցական բուժքույր՝<br>Աննա խուդավերդյան | 0.75 | 60511 |
| 4.ԿՐՏՍԵՐ ԲՈՒԺԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 1 | Մայրապետ՝<br>Աթլազ Պողոսյան | 1.0 | 80000 |
| | Ընդամենը՝ հաստիքներ | 14.25 | |

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Մեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիսյան | Ջոհրար | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԲԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Կարբի համայնք, 3-րդ փողոց, N 1, էլ. փոստ karbi_karbi@mail.ru
Հեռ. +37423290590

# ՈՐՈՇՈՒՄ

## «15» ՀՈՒՆՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 7

## <ԿԱՐԲԻԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ> ՀԱՄԱՅՆԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 16)-րդ մասով, Կարբի համայնքի ավագանին

## Ո Ր Ո Շ Ու Մ Է՝

Թույլատրել Կարբի համայնքի ղեկավարին՝ <Կարբիի բժշկական ամբուլատորիա> համայնքային ոչ առևտրային կազմակերպության ժամանակավոր պաշտոնակատար նշանակել իր կողմից ներկայացված թեկնածուին՝ Կարմեն Մնացականի Հովհաննիսյանին:

Կողմ 7 բացակա 2 դեմ 0 ձեռնպահ 0

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ալեքսանյան | Հայկ | բացակա |
| 2 | Ամիրյան | Կարապետ | կողմ |
| 3 | Ավետիսյան | Լիանա | կողմ |
| 4 | Ասլանյան | Սեյրան | բացակա |
| 5 | Բաղդասարյան | Տիգրան | կողմ |
| 6 | Նանյան | Թաթուլ | կողմ |
| 7 | Հայրապետյան | Հրահատ | կողմ |
| 8 | Մայիլյան | Ջոհրաբ | կողմ |
| 9 | Նազարեթյան | Վարդգես | կողմ |

ԿԱՐԲԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ